«Ամուլսար» ծրագրի շրջանակներում վերապատրաստվելու և աշխատանքի է ընդունվելու 200-300 մարդ հարակից համայնքներից:

Վիճակագրությունը ցույց է տալիս, որ աշխատանքի ընդունված յուրաքանչյուր հանքագործին բաժին են ընկնում օժանդակ ծառայություններ մատուցող 2-3 հոգի:

Հանքարդյունաբերությունը՝ Հայաստանի ոսկե ապագայի համար

Այս համարում՝

Գեոթիմի ապագա կադրերը 1

Բնապահպանական ազդեցության գնահատում 2

Փոշու աղբյուրներն ու նվազեցման միջոցառումները 2

Համայնքների ուսանողները՝ Գեոթիմի աշխատակիցներ

Աշխատանքն այսօր հանապազօրյա հացի խնդիր է: Գեոթիմի կարգախոսն է հզորացնել համայքների մարդկային ռեսուրսները և կադրեր պատրաստել՝ Ամուլսարի ծրագրում աշխատելու համար:

Այսօր Գեոթիմը Գորայք, Սարավան և Գնդեվազ գյուղերից ֆինանսավորում է վեց ուսանողների՝ սովորելու Երևանի պետական համալսարանի երկրաբանական, և Հայաստանի Ճարտարագիտական համալսարանի լեռնամետալուրգիական ֆակուլտետներում:

Նրանք են՝
Դավիթ Դավթյան
Սերգեյ Մկրտումյան
Էդիկ Արշակյան
Գարիկ Կարապետյան
Զոհրաբ Խաչատրյան
Մկրտիչ Կարապետյան:

Այն հարցին, թե՝ "ինչու՞ որոշեցիք ընդունվել հենց այս ֆակուլտետը", ուսանողները պատասխանեցին, որ սիրում են այդ մասնագիտությունը, սակայն ֆինանսական սուղ պայմանները թույլ չեն տվել սովորել. միայն Գեոթիմի շնորհիվ հնարավոր եղավ ստանալ բարձրագույն կրթություն:

ՈՒսանողների մեծ մասը չափազանց ոգևորված են ավարտելուց հետո Ծրագրում աշխատելու հեռանկարից: Ինչպես ասաց Գարիկը, «քանի որ մեր համայնքում հնարավորություն է ստեղծվել աշխատել, որոշեցի սովորել»: Իսկ Էդիկի կարծիքով՝ «սա հիանալի նախագիծ է, որը թույլ է տալիս անապահով ընտանիքների երիտասարդներին սովորել":

Զոհրաբ Խաչատրյանը ոգևորված ասում է. "սա հեռանկարային նախաձեռնություն է, որն ապահովում է գյուղի երիտասարդներին աշխատանքով":

Ի դեպ, ուսանողներից չորսն արդեն աշխատում են Գեոթիմում՝ այն համատեղելով հեռակա ուսուցման հետ:

Ամուլսարի ներկայիս և ապագա աշխատակիցները

Ի՞նչն է այս ուսանողներին համախմբում. այն, որ բոլորը պլանավորում են վերադառնալ իրենց գյուղեր և աշխատել Ամուլսարում, և որ բոլորն ունեն ապահովության զգացում:
Ինչպես նշեց Մկրտիչը, Գեոթիմի շնորհիվ "ես սովորում եմ բարձրագույն ուսումնական հաստատությունում և ապահովված եմ աշխատանքով": Ի դեպ, նա սկսել է որպես բանվոր, այժմ աշխատում է Գեոթիմում, որպես երկրաբան, միաժամանակ սովորում համալսարանում :
Ուսանողների լեզվով ասած՝ "որքան մտածված և հեռանկանային ծրագիր":

ՓՈՇՈՒ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ. բնակավայրերի հեռավորությունը փոշու աղբյուրներից

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նախնական տվյալներն արդեն հայտնի են: Արդյունքները կտեղակայվեն Գեոթիմի կայքում, կներկայացվեն համայքներին հանդիպումների ժամանակ և ամսաթերթերում:

Այսօր հակիրճ ամփոփենք փոշու վերաբերյալ հետազոտման արդյունքները՝ պարզաբանելու համայնքների հարցերն ու մտահոգությունները:

- Տարրալվացումը կկատարվի հատուկ լուծույթով, որն ապահովում է կույտի անընդհատ խոնավություն և սահմանափակում փոշու արտանետումների քանակը:

- Քարաբեկորների ջարդումը փոշու արտանետման աղբյուր է, սակայն եռակի ջարդումը կիրականացվի փակ շենքում, հանքաքարը ջարդման կայանից տարրալվացման հարթակ տեղափոխվելու է փակ կոնվեյերով: Այսինքն այս շինություններից փոշու արտանետումները բավականին ցածր կլինեն:

- Հորատումն ու պայթեցումները փոքր ծավալի փոշու աղբյուր են, իսկ քարաբեկորների բարձումը՝ միջին ծավալի: Սակայն փոշու կառավարման միջոցառումները բավականին արդյունավետ են, օրինակ՝ ջրցան մեքենաների անընդհատ ուղեկցումը քարաբեկոր տեղափոխող մեքենաներին:

Գյուղերի և Ջերմուկի վրա փոշին ազդեցություն չի ունենա՝ փոշու հեռավորության և նախատեսվող միջոցառումների շնորհիվ:

Ամուլսարը՝ օրինակելի հանքավայր

Եվ այսպես՝ ամփոփենք.
- Փոշու 95%-ը կնստի փոշու աղբյուրից 100 մ. հեռու,
- Մնացած 5%-ը կտարածվի առավելագույնը 1000 մ.
- Բացահանքից և տարրալվացման հարթակից բնակավայրերը գտնվում են զգալիորեն հեռու.
- Գեոթիմը մշակել է փոշու կառավարման նորագույն տեխնոլոգիաներով հագեցված նախագիծ. ջրցան մեքենաներ, փակ կոնվեյեր, ջարդումը՝ փակ շենքում:

Բնակավայր	Հեռավորությունը բացահանքից/կմ	Հեռավորությունը տարրալվացման
Գորայք	5.1	2.2
Ուղեձոր	4.4	7.4
Սարավան	6.9	12.6
Սարալանջ	6.9	12.6
Գնդեվազ	10.7	16.6
Ջերմուկ	15.7	18.8
Կեչուտ	8.6	11.6

Գեոթիմը կբերի նորագույն տեխնոլոգիաներ, որոնք այս տարածաշրջանում դեռևս չեն ներդրվել: